

**ՉԱՔԱՐ ՀԱԿՈՒԲԻ
ՔԵՇԻՇԵԱՆ**

Խմբավար, ՀՀ ԳԱԱ Արվեստի Ինստիտուտի հայցորդ
(Բեյրութ, Լիբանան)
E-mail: kamilazakar@yahoo.com

**ՀԱՅ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԽՄԲԵՐԳԱՅԻՆ
ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ***

Մեկ բառով բնորոշելու համար սփիւռքահայ մանկապատանեկան խմբերգային երաժշտական յորինումները կրնանք զանոնք կոչել տարագիր արուեստ:

Արդարեւ, յետ եղեռնեան օրերուն, ցեղասպանութեան արհաւիրքէն ճողոպրած ու սփիւռքացած հայու բեկորներուն առաջին գործն ու առաքելութիւնը եղաւ հայկական բոլոր գաղթօճախներուն մէջ ստեղծել եկեղեցիներ, որոնց անմիջական կողքը՝ դպրոցներ ու ակումբներ, որոնք կը միտէին նախ եւ առաջ ապահովել սփիւռքածին նորահաս սերունդներու հայապահպանումն եւ տարրական ու հայեցի կրթութիւնը, եւ ապա, յետագայ տարիներուն, նոյն կառոյցներուն հիման վրայ ստեղծուած մշակութային միութիւններու ճամբով (Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւն, Թեքէեան Մշակութային Միութիւն, Նոր Մերունդ Մշակութային Միութիւն, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան Անդրանիկ Մշակութային Միութիւն) պահպանելու հայեցի մշակոյթն ու, ըստ հնարաւորին, ստեղծելու եւ տարածելու նորը:

Այս իմաստով 1930-ական թուականներէն սկսեալ կազմուեցան պարախումբեր, երգչախումբեր, թատերախումբեր եւ արուեստի այլ խմբակներ, որոնց գործունէութիւնն ապահովեց ոչ միայն հայապահպանումն ու նոր միջավայրերու մէջ հայոց քաղաքական ու քաղաքացիական կեանքի անխափան ու հեզասահ ընթացքը, այլեւ միջավայր ստեղծեց մշակութային առողջ ու աշխոյժ ստեղծարար գործունէութեան:

Այս բոլորն իրենց մեծ դերակատարութիւնն ունեցան մանաւանդ Միջին Արեւելքի երկիրներուն մէջ, ուր այդ օրերուն տակաւին տեղական մշակութային երեւելի նախաձեռնութիւններ ու մթնոլորտ չկար, հետեւաբար, հայութիւնն այդ առումով մեծ նպաստ բերաւ տեղւոյն արարական մշակութային կեանքին մէջ ոչ միայն առաջատար ըլլալու, այլեւ տուեալ երկրի մշակոյթի ոլորտին մէջ ուսանելի ու հիմնարար ըլլալու իմաստով:

Քանի որ մեր ուսումնասիրութեան նիւթը կը վերաբերի երգչախումբային արուեստին, իբրեւ ապացոյց վերոնշեալին կարելի է առնուազն մէջբերել Լիբանանեան փորձառութիւնը:

Առաջին քառաձայն երգչախումբը Լիբանանի մէջ հիմնադրուելու ու ղեկավարուելու է Յակոբ Իւվագեանի կողմէ: Մինչ այդ Լիբանան չունէր բազմաձայն երգչախումբ ու հետեւաբար, պատմականօրէն այս մարզի յառաջամարտիկը հայութիւնն է շնորհիւ Իւվագեանի:

Առաջին արեւմտաեւրոպական մեծ կտաւի խմբերգային ստեղծագործութիւնները Լիբանանի մէջ կատարուած են մինչեւ օրս իր յեղինակութիւնը պահող Պէյրութի Ամերիկեան Համալսարանի «Ասսեմպլի Հոլ» սրահին մէջ, ղեկավարութեամբ Տիգրան Քասսունիի:

Առաջին անգամ արարական ժողովրդական երգերու բազմաձայն ներդաշնակութիւնը կատարած է անուանի երաժշտահան Բարսեղ Կանչեան, որ մշակած ու 1932-ին իր նշանաւոր «Գուսան» երգչախումբով կատարած է հինգ ժողովրդական երգեր, ինչպէս նաեւ Լիբանանի ու Սուրիոյ պետական օրհներգերը:

Ստեղծուած երաժշտական այս մթնոլորտն իր հերթին, բայց մանաւանդ նորահաս սերունդներն իրենց տարիքին, յուզաշխարհին ու հետաքրքրութիւններուն հետ քայլ պահող երգերու անհրաժեշտութեան լոյսին տակ, ապահովաբար առաւել պիտի շեշտադրուէր ու ինքնաբերաբար պիտի հասուննար պահին ստեղծելու նաև մանկապատանեկան երգչախումբեր ու հետեւաբար՝ մանկապատանեկան խմբերգային գրականութիւն: Միջին Արեւելքի մէջ, ուր հայ ազգային համայնքները իրենց իսկ ստեղծած դպրոցներուն, եկեղեցիներուն, մշակութային, մարզական, բարեսիրական ու քաղաքական ակումբներուն մէջ կ'ապրէին լաւապէս կազմակերպուած հաւաքական կեանքով մը, առաջին իսկ հնարաւորութեան պարագային անպայմանօրէն պիտի ստեղծէին մանկապատանեկան երգչախումբեր, որոնք, իրենց համերգային երգացանկին մէջ պիտի ներառէին հայրենի համապատասխան երգերու ընտրանի մը, սակայն, յատկապէս իրենց համար ալ արեւմտահայերէնով ստեղծուող երգերու խիստ կարիքը պիտի զգացուէր շուտով: Ու այսպէս, «Նանոր», «Մաշտոց», «Ծննդայ», «Կաքաւիկ», «Արտուտիկ», «Ծիածան»,

Ուսումնասիրութիւնը կատարուած է Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան դրամաշնորհով

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Գոհար Կաղենի Շագոյանի՝
20.5.2021 թ., ընդունվել է տպագրության՝ 21.5.2022 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 18.5.2022 թ.

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ
YEREVAN STATE CONSERVATORY AFTER KOMITAS
ЕРЕВАНСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ КОНСЕРВАТОРИЯ ИМЕНИ КОМИТАСА

«Պլյուս», «Ազատ Մանուկեան», «Դպրոցատեր», «Ճպուռ», «Գարկաչ» ու այլ երգչախումբերու ծնունդն ու համերգային լայն գործունեությունը պատրաստեցին այն ենթահողը, ուր տարագիր երաժշտահաններ սկսան երկնել նաև մանկապատանեկան երգ ու նուագ:

Միհրաքահայ մանկապատանեկան խմբերգներու հիմնական յեղինակներն են Բարսեղ Կանաչեան, Ալեքսի Նազարեան, Եղուարթ Յակոբեան եւ Ալեքսան Մանուկեան, Ջարեհ Արքեպիսկոպոս Ազնաւորեան: Մանկապատանեկան բազմաթիւ երգերու յեղինակներ են նաև Պոլսահայ Միրվարդ Գարամանուկ եւ իր ստեղծագործական կեանքին կարելոր մէկ մասը Լիբանանահայ Հ.Բ.Ը.Մ.-ի դպրոցներու երգեցողութեան ուսուցիչ Համբարձում Պէրպէրեան, որ յեղինակած է շուրջ 60 դպրոցական եւ 20 մանկապարտէզային երգեր, որոնց խմբերգային տարբերակներու առկայությունը ճշտելի կը մնայ: Բացառուած չէ, որ այլ երաժշտահաններ եւս ստեղծած ըլլան քանի մը երգեր, սակայն անոնք նպատակամղուած յատուկ մտադրութեան մը արքայիքը չեն ու կը կրեն պատահական բնոյթ: Վերոնշեալներն իրենց խմբերգներն ստեղծած են մասնայատուկ պարագաներու լոյսին տակ, սփիւռքի տարբեր երկիրներու մէջ ու հրատարակած են խմբերգային առանձին ժողովածուներով:

ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՉԵԱՆ (1988-1967)

Ժամանակագրականօրէն առաջին մանկագիր երաժշտահանը Գոմիտասի նշանաւոր սաներէն Բարսեղ Կանաչեանն է, որ Գիպրոսի Մելքոնեան կրթական հաստատութենէն Լիբանան տեղափոխուելով, ամբողջութեամբ լրծուած է լիբանանահայ երաժշտական կեանքի կազմակերպումին, ըստեղծելով «Գուսան» երգչախումբը, յատկապէս անոր համ ար յօրինելով նոր խմբերգեր, մատուցելով տարեկան համերգներ Լիբանանի եւ մօտակայ այլ գաղութներու մէջ: Կեդրոնական յոբելեանական յանձնախումբը նոյն օրերուն հրատարակած է Բարսեղ Կանաչեանի զանազան խմբերգները շարք մը պրակներով, որոնց կարքին, Թ. Պրակը յատկացուած է իր մանկապատանեկան խմբերգերուն, հրատարակուած Պէրուրթի մէջ 1947-ին:



Մինչեւ կէսօր Համազգայինի Նշան Փալանճեան ճեմարանի ու Հայ Գաթողիկէ Անաղարտ Յղութեան քոյրերու Հոփսիսիմեանց վարժարանի երգ-երաժշտութեան ուսուցիչ, կէսօրէ ետք երաժշտահան, իսկ երեկոյեան՝ խմբավար Բարսեղ Կանաչեան ժամանակ յատկացուցած է ստեղծելու «19 փոքր երգեր», իրաքանչիւրը նուիրելով այն օրերու իր ընկերական, բարեկամական ու ընտանեկան շրջանակի մարդոց մանուկ ու պատանի զաւակներուն, որոնց շարքին՝ իր երեք դուստրերուն: Բարսեղ Կանաչեան իր երգերուն համար ընտրած է եւ՛ արեւելահայ, ինչպէս Աթաբեկ Խնկոյեան, Ղազարոս Աղայեան, Գամառ

Քարիպա, եւ՛ արեւմտահայ բանաստեղծներու, ինչպէս Արմէն Անուշ, Լեւոն Շանթ, Եղուարթ Տարօնեան, Մուշեղ Բշխան եւ Սմբատ Շահագիզ, ոտանաւորներ ու բանաստեղծութիւններ: Խնամքով ընտրուած ոտանաւորներ, հանրամատչելի մեղեդիներ, պարզ, զուլալ ու անպաճոյց դաշնամուրային նուագակցութիւն ու դաստիարակիչ բովանդակութիւն: Ահաւասիկ այս չորս ստորոգելիներով օժտուած խմբերգերը, որոնք կրնան նաև սկսնակ աշակերտներու կողմէն սոսկ դաշնամուրով ալ նուագուիլ, գեղեցիկն ու բարին սփռելու ամէն յատկութիւն ունին եւ ունկնդիրը կը լեցնեն մանկական գուարթ թովչանքով: Յուզառատ է նկատել, որ Լեւոն Շանթի ու Մուշեղ Բշխանի բառերով երաժշտուորուած երգերը նուիրուած են իրենց զաւակներուն ու թոռներուն: Քանի մը երգերու պարագային ալ, ինչպէս «Ինչ անուշ», «Ծնկըլը Մնկըլը», «Ամպեր» եւ «Խնոցի» երգերուն, հիմնուած է ժողովրդային բանահիւսութեան վրայ:

Տեղին է մատնանշել, որ իր ժամանակին այս երգերը Լիբանանեան թէ սփիւռքի այլ գաղութներու մանկապատանեկան երգչախումբերուն կողմէ կատարուած են շատ մեծ խանդավառութեամբ ու սիրով, եւ իրադարձութիւն նկատուած են այս բնագաւառին մէջ: Յիրաւի «19 փոքր երգերը» կը կրեն մեղեդային հոգեգրաւ հարրստութիւն ու հարորդական են: Բարսեղ Կանաչեանի ծննդեան 100-ամեակին առիթով Համազգայինի «Գարկաչ» երգչախումբիս հետ կատարելով ամբողջ երգաշարը, անձնապէս առիթ ունեցած եմ հաստատելու ու վկայելու անոնց հոգեգրաւ ու սիրելի ըլլալու փաստը: Երգչախումբի երեխաներն անմիջական սիրով ու ոգէւորութեամբ ստրուեցան ու կատարեցին ամբողջ շարքը, նոյնիսկ այն պարագային, որ, քանի մը երգերուն բառերը, ինչպէս «Խնոցի» եւ «Ճախարակ» երգերունը, հնամենի, ժամանակավրէպ, անհետաքրքիր ու անհասկնալի կրնային թուիլ նորահաս սերունդին համար: Սակայն անոնց երաժշտութեան ներգոր ազդեցությունը մղեց գիրենք երաժշտութեամբ տարուիլ եւ նուագ ուշադրութիւն դարձնել երգերուն բառերուն:

Տարինեւո ընթացքին բնականաբար որեւէ հեղինակի երգերէ ոմանք կրնան կորսնցնել իրենց երբեմնի ժողովրդականութիւնն ու հմայքը, սակայն Բարսեղ Կանաչեանի «Մեղու», «Գիւղի առտուն», «Ծնկըլը մընկըլը», «Խաղաղ գիշեր», «Ծիծեռնակին բոյնը» եւ «Հայրենի կարօտ» երգերը երկար տարիներէ ի վեր սփիւռքահայ մանկապատանեկան երգչախումբերու երգացանկերուն մէջ կը մնան մեծ ժողովրդականութիւն վայելող երգեր: Բարսեղ Կանաչեան հեղինակն է նաև Համազգայինի ճեմարանի քայլերգին, զոր սերունդէ սերուն դպրոցական աշակերտներուն կողմէ կ'երգուի ամէն առաւօտ:

ԵՂՈՒԱՐԴ ՅԱԿՈԲԵԱՆ (1920 - 2004)

Մփիռքահայ մանկապատանեկան խմբերգային երաժշտական արուեստին ամենէն երկար տարիներու ծառայութիւն մատուցած երաժշտահանն է Եղուարդ Յակոբեան, տրուած ըլլալով, որ ան երկար տարիներ նաեւ իբրեւ խմբավար ծառայած է եզրիպատահայ գաղութին, ղեկավարելով տեղոյն շարք մը մանկապատանեկան եւ քառաձայն խառն երգչախումբեր, որոնց մէջ նշանակալից ու անգնահատելի նպաստ բերելով Գահիրէի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի «Շնորհալի» երգչախումբի ստեղծագործական կենսագրութեան:



Հակառակ իր մեծ հակումին, իր ամուսնութեան խաչեղբայր Արամ Խաչատուրեանի նման ուշ սկսած է երաժշտական լուրջ ուսումնառութեան: 1920-ի ծնունդ Եղուարդ Յակոբեան միայն երեսուն տարեկանին հնարաւորութիւն կունենայ մասնագիտական կրթութիւն ստանալու: Երաժշտական նախնական կրթութիւն ստանալով իր հանրակրթական դպրոցի ուսուցիչ եւ եկեղեցւոյ դպրապետ Ղազարոս Ղազարոսեանէն, 1954-ին կ'աւարտէ Փարիզի «Մեզար Ֆրանք» երաժշտանոցը, կը վերադառնայ Եզրիպատոս ու ամբողջ գիտակցական կեանքը կը նուիրէ եզրիպատահայ գաղութի երաժշտական կեանքին, «Շնորհալի» երգչախումբին կողքին հիմնելով եւ ղեկավարելով նաեւ «Եզրիպատահայ երգչախումբ»-ն ու «Ազատ Մանուկեան» մանկապատանեկան երգչախումբերը: Իբրեւ երգ-երաժշտութեան ուսուցիչ երկար տարիներ դասաւանդած է տեղոյն Նուպարեան ու Գալուստեան ազգային վարժարաններուն մէջ, միշտ ալ հիմնադրելով եւ ղեկավարելով ազգային վարժարաններու դպրոցական երգչախումբեր, մասնակցելով գանազան ձեռնարկներու, սոսնակատարութիւններու, ոգեկոչման երեկոներու:

Եղուարդ Յակոբեան իր մանկապատանեկան խմբերգերու իր յորինումներով նոր էջ կը բանայ սփիռքահայ այս բնագաւառին մէջ, տրուած ըլլալով, որ մինչ այդ թուականները, մանկապատանեկան տարիքին անյարիր երգեր, այն ալ ոչ միշտ ճիշտ ընտրութեամբ, կուսուցանուէին հայկական դպրոցներէն ներս: Քննադատելով իր ժամանակի երաժշտական դասաւանդումը, Յակոբեան կը գրէ. «Մեր մէջ փոքրիկ մանուկներուն կը սկսին սորվեցնել բարոյախօսական, խրատական, փիլիսոփայական երգեր, որոնց իմաստն ան չի հասկնար ու չ'ազդուի այնպէս, ինչպէս պետք էր, մինչդէռ որպէսզի երգեցողութիւնն անոր ուղեղին բարեբար ազդեցութիւն մը ունենայ, պետք է գիտակցական ըլլայ... դատարկ հնչիւնէն դատարկ զգացում կ'առաջանայ: Զգացումները կանոնաւորելու, ուղղելու, զարգացնելու համար հարկ է երգեցողութեան աւանդումին նպատակայարմար ուղղութիւն մը տալ... պետք է տխուր երգ չտալ երբեք, այլ

ամէն ինչ աշխոյժ, եռանդ պիտի ներմուծէ անոնց հոգիէն ներս...»: Եւ այս համոզումով ալ կը յորինէ 29 խմբերգեր դաշնամուրի նուագակցութեամբ, որոնք եօթը պրակներով կը հրատարակուին ու կը տարածուին «Հարազատ դպրոց» վերնագրին տակ: Այագային, իր ծննդեան 60-ամեակին ու ստեղծագործական վաստակին 40-ամեակներուն առիթով կը խմբուին ու Գահիրէի մէջ կը վերահրատարակուին «Մանկապատանեկան երգափունջ» վերնագրով:

Եղուարդ Յակոբեան մանկապատանեկան իր երգերը յորինած է մանկավարժօրէն, այսինքն, ոտանաւորներու թեմայով ընտրութիւնը մէկ կողմէն, մեղեդային հեշտ ու միաժամանակ գունեղ կենսութիւններուն ու պատկերայնութիւնը միւս կողմէն, միաժամանակ թէ՛ երգող մանուկին ու թէ՛ ունկնդիրին համար կը դառնան երանութիւն պարզեւոյ պահեր:

Իր խմբերգերուն նիւթը տարուան չորս եղանակներն են, ճանաչողական նպատակներով մտածուած՝ բնութիւնն իր կենդանական ու բուսական աշխարհով: Դրպրողն ու դպրոցական կեանքը իր ուրոյն տեղն ունի իր յորինած երգերուն մէջ, բայց իր ստեղծագործութիւններուն մէջ առկայ է մանաւանդ հայրենասիրական շէշտ մը, որ այնքան կարեւոր բաղադրիչ է հայրենագուրկ դպրոցականներուն համար:

Եղուարդ Յակոբեան իր տրամադրութեան տակ ունենալով իր իսկ երգչախումբերը, ծանօթ ըլլալով անոնց կատարողական հնարաւորութիւններուն, համապատասխանաբար բազմաձայնած է զանոնք, ի տարբերութիւն Աւետիս Նազարեանի պարագային, եւ հասած է երգչախումբային հարմոնիք նկատատելի զարգացումներու, առաւել ձոխացնելով ու երգերուն կատարումը յաճելի ու հետաքրքրական դարձնելով:

ԱՒԵՏԻՍ ՆԱԶԱՐԵԱՆ (1930-2019)

1931-ին, երբ տակաւին մէկ տարեկան էր, ծնողներուն հետ զրկուելով իր ծննդավայր Խարբերդէն կը



հաստատուի Հալէպ, ուր որպէս երաժշտութեան առաջին ուսուցիչ ունենալէ ետք Բարսեղ Կանայեանը, Աւետիս Նազարեան առաւել շուրջ եւ ակադեմական երաժշտական ուսում կը ջանքէ նախ՝ Պէրյոթի Գեղեցիկ Արուեստներու Ակադեմիայի Academie des Beaux Arts եւ այնուհետեւ՝ Վենետիկի մէջ, ուր ապրած ու ստեղծագործած է, ինքզինք նուիրելով նաեւ մանկավարժական գործունէութեան, զուգահեռաբար

Նվիրվում է ԵՊԿ հիմնադրման 100-ամյա հոբելյանին

Իբրև հասարակական գործիչ իր կարեւոր նպաստը բերելով Եւրոպայի մէջ հայ մշակոյթի ու առհասարակ հայ դատի քարոզչական լայն աշխատանքներուն:

Իր սենեկային, երգային թէ նուագարանային ստեղծագործութեանց զուգահեռ, ինք եւս իր լուսման ներդրած է մանկապատանեկան երգարուեստին, յօրինելով երգեր, որոնք Վենետիկի Սուրբ Ղազարի կղզիի կաթողիկէ միաբանութեան հայրերու տպարանէն լոյս տեսած են 1980-ին: Հատորը կը կոչուի «20» մանկական երգեր: Այս երգերն սփիւռքի տարածքին իրենց տարածումըն ունեցած են հրատարակուելէ շուրջ տասնըրեանց տարիներ առաջ իսկ, որովհետեւ, բնոյթով առաւելաբար մանկապարտեզային կամ դպրոցական առաջին տարիներու աշակերտական տարիքին յարիր են: Պատմաբան եւ Նագարեանի ուսանողական տարիներու սենեկակից Երուանդ Բամպուքեանի հետ մեր գրուցէն պարզուեցաւ, որ ան, իր երգերն ստեղծագործած է Հալէպի հայկական մանկապարտեզներէն մէկուն մանկապարտեզի տարեվերջի հանդէսներուն համար, մանկապարտեզպանուհի Ս. Տասնապետեանի քաջալերանքով: Ուշագրաւ են երգերուն համար ընտրուած բառերը: Անոնցմէ եօթն ժողովրդային են, որոնք, երգանալու շնորհիւ, ի տարբերութիւն արեւմտահայերէն բազմաթիւ այլ խաղիկներու, փրկուած են ի սպառ կորուստէ: Մնացեալները, բացառութեամբ մէկուն, հիմնուած են ըսփիւռքահայ ոչ անուանի բանաստեղծներու ոտանաւորներուն վրայ, որոնք ակներեւորէն յաջող են իբրև երգացու ոտանաւորներ: Երգերուն մանկապարտեզային բնոյթին շնորհիւ նաեւ Աւետիս Նագարեանի երգերէն շատեր անմոռանալի են հայկական դպրոցներ յաճախող գրեթէ բոլոր սփիւռքահայերուն: Երգերուն մանկապարտեզային բնոյթը երբէք չի նսեմացներ հեղինակին ստեղծածին արժէքը, այլ, ըստ երեւոյթին, ան յատկապէս ստեղծած է գանոնք այդ նպատակին համար, կարեւոր բաց մը լրացնելով տարագիր հայութեան փոքրիկներուն երաժշտական առաջին դաստիարակութեան ոլորտին մէջ: Անխտիր բոլորն ալ դաշնամուրի նուագակցութեամբ յօրինուած «20 մանկական երգեր»-էն մէկը միայն երկձայն խմբերգային ծնունդ է, մնացեալներէն շատերը սակայն, իրենց մեղեդայնութեամբ, ընտրուած ոտանաւորներուն գեղեցկութեամբ արժանի են խմբերգագրութեան ու նաեւ իբրև այդպիսին նորովի կատարումի եւ տարածումի: Տեղին է նշել, որ այս երգերը մեծաւ մասամբ վերամշակուած են 1964-1965 տարիներուն:

Այս երգերէն գատ, մանկապատանեկան բնագաւառին մէջ Աւետիս Նագարեան տեր է նաեւ մեզի ցարդ անծանօթ երկու մանկական խմբերգերու եւ «Ճպուռն ու մրջիւնը» երաժշտական բեմախաղին, որ 2004-ին Համազգային Գրթական եւ Մշակութային Միութեան Լոս Անճելոսի մասնաճիւղը խտասալիկով հրապարակած է, կատարողութեամբ Հայաստանի «Տաթև» մանկապատանեկան երգչախումբին, ղեկավարութեամբ Վաչական Նաւասարդեանի:

ԱԼԵՔՍԱՆ ՄՆԱԿԵԱՆ (1936-1986)

Մանկագիր երաժշտահաններուն մէջ Ալեքսան Մնակեան ամենէն կրտսերն է: Ծնած է Լիբանան, Պէրոյթի հայահոծ Պուրճ Համուտ թաղամասին մէջ 1936-ին: Քաջալերուած հայ կաթողիկէ հոգեւորական Հայր Գրիգորիս Հէպէ եանի կողմէ,



ձեռնադաշնակ նուագելու սկսած է 16 տարեկանէն սկեպ եւ ապա, հնարաւորութիւն ունեցած է կատարերագործուելու Միլանոյի մէջ: Իբրև ձեռնադաշնակի վարպետ նուագած է Լիբանանի պետական ռատիօյի նուագախումբին մէջ զուգահեռաբար դասաւանդել-

ով Լիբանանի պետական բարձրագոյն երաժշտանոցին մէջ: Իր սերնդակից հայ երաժշտահան Պօղոս Ճելալեանի հետ մեծ դերակատարութիւն ունեցած է Լիբանանի երաժշտական կեանքին մէջ ոչ միայն իբրև դասաւանդ ու կատարող, այլեւ տեղւոյն արաբական նուագախումբերու երգացանկերու ներդաշնակման եւ նուագագրութիւններուն մէջ: Լիբանանահայ երաժշտական կեանքին մէջ իր բերած նպաստն անուրանալի է իբրև հայկական պարախումբերու նուագախումբերու պատրաստութեան գլխաւոր պատասխանատու, բայց մանաւանդ մանկապատանեկան երգչախումբերու հիմնադրման ու ղեկավարման ոգի ու մղիչ ոյժ:

Իր շնորհիւ է, որ լիբանանահայ «Օնոդայ» երգչախումբը օժտուեցաւ ընկերակից նուագախումբով, բայց մանաւանդ, իր ջանքերով ու ղեկավարմամբ ծնունդ առին «Նանո», «Արտուտիկ» ու Հ.Յ. Դաշնակցութեան պատանեկան միութեան երգչախումբերը, որոնք ունեցան կարճատեւ կեանք, բայց բովանդակալից երաժշտական կենսագրութիւն:

Ալեքսան Մնակեանին նախ ու առաջ կը պարտինք տասնեակ մը հայրենասիրական երգերու մշակումն ու կատարումը Հ.Յ.Դաշնակցութեան պատանեկան երգչախումբին կողմէն: Սփիւռքահայ իրականութեան մէջ առաջին ու ցարդ միակ երաժիշտն է Ալեքսան Մնակեան, որ կարեւորեց հայրենասիրական երգերու ուսուցման ու տարածման գործը իբրև հայեցի դաստիարակութեան հիմնաքար ու անոնց կատարման հաղորդեց գեղարուեստական շունչ ու մօտեցում:

Ալեքսան Մնակեան սակայն կ'առանձնանայ մանկապատանեկան երաժշտական կեանքին մէջ իր բերած մնայուն ու մեծագոյն ներդրումով, որ «Նանո» եւ «Արտուտիկ» երգչախումբերու հիմնումն ու համերգային գործունէութիւնն է Համազգային Հայ Գրթական ու Մշակութային Միութեան հավանիին տակ: Ահաւասիկ այստեղ է, ուր, 1979-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Գաթողիկոսարանի միաբան հայրերէն, երգերու բառերու հեղինակ Հայր Վարուժան Վարդապետ Հերկէլեանի հետ (այժմ Արքեպիսկոպոս) ստեղծեց «Արտուտիկ» մանկապատանեկան խմբերգներու շարք, որ նոյն տարուան ընթացքին ձայնագրուեցաւ եւ ձայնասկանի միջոցով տարածուեցաւ ամբողջ սփիւռքի մէջ ու մինչեւ օրս կը վայելէ մեծ յաջողութիւն:

Կ'արժե կարեւորութեամբ նշել, որ օրին, «Արտուտիկ» երգաշարի նօթաները տպագրուած էւ տարածուած են ձայնապնակին հետ, այսպիսով դիրաւցնելով անոնց տարածումն սփիւռքի զանազան գաղութներուն մէջ:

«Արտուտիկ» երգափունջը կը բաղկանայ 12 մանկապատանեկան խմբերգներէ, որոնք բոլորն ալ անխտիր արեւմտահայերէնով են եւ պատուիրատու կազմակերպութեան՝ Համազգայինի կողմէ նպատակադրուած են սփիւռքի դպրոցական աշակերտներն օժտել իրենց համար հարազատ ու դիրամատչելի արեւմտահայերէն երգերով:

Ուշագրաւ են երգերու թեմաները: Քանի մը երգերը նուիրուած են Ամանորի ու Սուրբ Ծննդեան տօներուն, ապա, տարուան չորս եղանակներէն իւրաքանչիւրին երգ մը նուիրուած է: Մնացեալ երգերուն թեման բնութիւնն ու կենդանական աշխարհն է՝ իր զուտ, կատակային ու մանկունակ հրճուանքով լի մեղեդային կերպարներով, որոնք բոլորն ալ անխտիր հոգեգրաւ են ու տարածուած ոչ միայն սփիւռքահայ երգչախմբային երգացանկերու, այլեւ ներառուած են դպրոցական երգ- երաժշտութեան դասապահերու ծրագիրներու մէջ:

ԶԱՐԵՆ ԱՐՔԵՎԻՍԿՈՂՈՍ ԱԶՆԱԻՈՐԵԱՆ
(1947-2004)

Զարեհ Արքեպիսկոպոս, առաւելաբար ի շարս եկեղեցական քառաձայն խմբերգերու մշակումին, յատուկ ուշադրութեան արժանացուցած է նաեւ մանկապատանեկան աշխարհը:

Եկեղեցական, ծիսական, կրօնական-երաժշտական



հրատարակչական, քարոզախօսական, մանկավարժական, դասախօսական, աստուածաբանական, խմբագրական, թեմակալ առաջնորդի, Սուրբ գրային արդի թարգմանչութեան, խմբավարական, դպրեմանքի ու կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբերու հիմնադիր դեկավարի ու բազում այլ

մարզերու մէջ լրջօրէն ու մեծ նուիրումով ծառայող Զարեհ Արքեպոս, իր երաժշտական արարումներն ու հոգեւոր ու մանկապատանեկան երաժշտութեան մշակումը կատարած է իր լայնածիր աշխատանքներուն զուգահեռ, գարմանալի ճարտարութեամբ գտնելով անհրաժեշտ ժամանակն ու եռանդը:

Զարեհ Արքեպիսկոպոս երաժշտական կրթութիւնն ստացած է աստուածաբանական իր կազմաւորումին

զուգահեռ, այն ալ՝ լիբանանեան պայմաններու մէջ եւ երաժշտական այն օրերու չափանիշներով ու հնարաւորութիւններով միայն: Անպայման որ տարբեր պիտի ըլլար իր վաստակն ու կշիռը՝ եթէ ան բարձրագոյն երաժշտական կազմաւորումով ամբողջութեամբ նուիրուէր երաժշտութեան: Մակայն, այս պայմաններուն մէջ իսկ անոր ստեղծագործութիւններուն թէ մշակումներուն մէջ առկայ են այնպիսի նմոյշներ, որոնք արգասիքն են բնատուր շնորհքի, խոր գիտութեան ու հմտութեան, զուտ, դաշն, գեղեցիկ, բայց ճառագուն կերպով հոգեւոր ու անկեղծ քրիստոնէական հաւաքտով ու ապրումով թաթաւուն:

Անգնահատելի է իր վաստակը մեր եկեղեցական երգեցողութեան կազմակերպումին ու յատկապէս որակական բարելաւումին, այլ խօսքով՝ բարեկարգչութեան մէջ, որուն մեծապէս սատարեցին հոգեւոր երաժշտութեան, հայ եկեղեցոյ «տաղերու», գանձերու, Շարականներու, ծիսակատարական թէ խորհրդակատարական երգերու իր պատրաստած հրատարակութիւնները, որոնք նկատառելի որակով ու նպատակաւարճութեամբ պատրաստուած են եւ օգտակար են նաեւ պատանեկան կազմերով եկեղեցական դպրոց դասերուն համար: Առանձինն ուսանելի են իւրաքանչիւրի հատորին ներածական բացատրութիւնները, որոնք մեծ հմտութեամբ ու բժախմբորէն կատարած է Զարեհ Արքեպիսկոպոս, շատ յաճախ առանձինն, երբերն ալ իր միաբանակից հայրերուն հետ համախորհուրդ:

Երաժշտական յօրինումներու եւ մշակումներու իր վաստակին մէջ կարեւոր տեղ յատկացնելով մանկապատանեկան խմբերգային ստեղծագործութիւններուն «Երգեցէք միշտ մանուկներ» վերնագրով մէկ երդիքի տակ հաւաքուած դաշնամուրի նուագակցութեամբ 26 խմբերգները առաւելաբար հոգեւոր ու դաստիարակիչ բնոյթ ունին: Քանի մը հատն ալ նուիրուած են հայոց այբուբէնին, Մեսրոպ Մաշտոցին: Տօնական առիթներու նուիրուած շարք մը՝ ամանորի, Սուրբ Ծննդեան ու Սուրբ Զատիկին: Երկար տարիներ վարելով Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կրօնական դաստիարակութեան բաժանմունքին վարիչի պաշտօնը, իր յօրինած խմբերգերուն թեմաները, բնականաբար, նպատակաւորուած կերպով երաժշտութեան ճամբով մանուկներու բարոյական դաստիարակութեան առաքելութեան պիտի անդրադառնային, մանաւանդ, որ անոնք շատ յարմար են կաթողիկոսութեան թեմերու կիրակնօրեայ հոգեւոր դաստիարակչական դպրոցներու աշակերտութեան համար: Լոկ երգերուն վերնագիրներուն թուարկումը բաւարար պիտի ըլլայ հաստատելու այս մարզին մէջ իր սեւեռուն արեւելումը: Ահաւասիկ, «Ալելուիա», «Օրօր Յիսուս մանուկին», «Միրուն հրեշտակներ», «Աղօթք», «Բեթլեհէմի աստղին», «Զատիկի առաւօտ», «Խաչակնքում», «Ծնունդի ծառ», «Ով որ խոնարհ ու հեզ ըլլայ», «Նուէր մանուկ Յիսուսին» եւ այլ մանկապատանեկան խմբերգերով, Զարեհ Արքեպիսկոպոս հիմնադիրն է հայ հոգեւոր ու բարոյախօսական մանկապատանեկան խմբերգերուն, որոնք, իբրեւ թեմա, իւրայատուկ են հայկական մանկապատանեկան խմբերգագրութեան մէջ:

Նվիրվում է ԵՊԿ հիմնադրման 100-ամյա հոբելյանին

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԵՏԱՐԿՈՒՄԵՆԸ

Ըստ ամենայնի ակներե է, որ սփիւռքահայ մանկապատանեկան խմբերգները ե՛ւ քանակով, ե՛ւ որակով կը գիչին Հայաստանի մէջ ստեղծուած վաստակին հետ բաղդատութեան պարագային: Այս բնութագրումն ունի իր առարկայական ու ենթակայական պատճառները: Ակներե է, որ աւելի քան երկու տասնեակ սփիւռքահայ արհեստավարժ երաժշտահաններէն միայն վեցը նուիրուեր են այս ժանրին, այն ալ ոչ հետեւողական եւ ամբողջական ներդրումով: Պարագայականութիւնը մեծ դեր խաղացած է այս առումով եւ պէտք է ընդգծել, որ երաժշտահաններն իրենք իրենց իսկ գիտակից նախաձեռնութեամբ լծուած են կարելոր ու շահեկան այս բնագաւառի նախ ստեղծման եւ ապա՝ որոշ չափով զարգացման գործին: Այսինքն, անոնք չեն ունեցած երգչախումբերը արեւմտահայերէն երգերով օժտելու ծրագրուած ու կազմակերպուած նեցուկ որեւէ ազգային-միութենական կազմակերպութիւններու կողմէն: Այլ հարց, որ երգերու ծնունդէն ետք համայնքային երգչախումբերը կատարեր են զանոնք ու դպրոցական երգերաժշտութեան առկայ քանի մը դասագիրքերու մէջ շարք մը երգեր տեղ գտած են: Երաժշտահանները չեն ունեցած նաեւ նիւթաբարոյական աջակցութիւն իրենց ստեղծագործութիւններուն դիմաց: Այլապէս, ակնկալելի պէտք էր ըլլար, որ թէ քանակական եւ թէ որակական առաւել բեղուն վաստակի մը դիմաց դեմ հանդիման գտնուէինք:

Երկրորդ հանգամանքն սփիւռքահայ մանկապատանեկան խմբերգերուն կատարողական դիրտութեան պայմանականութիւնն է: Բոլորն անխտիր գուրկ են կատարողական մարտահրաւերներ դիմագրաւելու յանդրգնութենէն: Ի տարբերութիւն Հայաստանի երգչախմբային արդի կենսափորձին, սփիւռքի երաժշտահանները, որոնք ըստ էութեան նաեւ առաջին կատարող խմբավարներն եղած են իրենց իսկ ստեղծագործած երգերուն, իրենց տրամադրութեան տակ չեն ունեցած բարդ կատարումներու ատակ երգչական հմտութիւններով օժտուած երգչախումբեր, ուրկէ եւ կուգայ երգերուն պարզունակութիւնը:

Երրորդ, սփիւռքի մէջ ստեղծագործուած երգերուն մեծամասնութեան բառերը արեւմտահայերէն են: Այս ընդգծումը նշանակալից է նախ երկճիւղ մեր լեզուին արեւմտահայ մասով ալ նոր երգեր ունենալու իմաստով, բայց մանաւանդ, արեւմտահայ հատուածի նորահաս սերունդին մօտ լեզուամտածողութեան խաթարման առաջին առնելու միտումը քայլ: Ծանօթ է, որ սփիւռքի հայկական դպրոցներու դասագիրքերուն մէջ արեւելահայ հեղինակներու տեղ կը տրուի հինգերորդ դասարանէն սկսեալ, երբ աշակերտներուն լեզուամտածողութիւնը որոշ չափով արդէն իսկ կազմաւորուած կ'ըլլայ: Այս իմաստով արեւմտահայ երգերն իրենց դերակատարութիւնն ունեցած են եւ կը շարունակեն ունենալ: Ալեքսան Մնակեանի երգերուն ոտանաւորներուն հեղինակ Վարուժան Արքայիսկոպոս շերկէլեան մեզի հետ ունեցած իր գրոյցին ընթացքին վկայեց այս մասին, յաւելելով, որ Մնակեան ցուցաբերած է շատ բծախնդիր մօտեցում այս գծով:

Չորրորդ, սփիւռքահայ խմբավարներու բոլր մը, անուանապէս՝ Յովհաննէս Վերանեան, Քրքաշրեան եղբայրներ, Սեդրակ Տէր Ղազարեան, Մնկրեան, Խորէն Մէլիսանէճեան եւ Գրիգոր Սանտալճեան, հայրենիք ներգաղթելով հիմնադրեցին մանկապատանեկան խմբերգատու երգչախումբեր, կարելոր նպաստ բերելով Հայաստանի մանկապատանեկան երգչախմբային կեանքին:

Եւ վերջապէս, ինչքան ալ բնութեան, կենդանական աշխարհին, մանկական խաղաշխարհին թէ այլ բնոյթ կրած ըլլան սփիւռքահայ մանկապատանեկան խմբերգերը, անպայմանօրէն անոնց մէջ մեծ տեղ յատկացուած է հայրենիքի ու հայրենասիրական թեմաներով երգերուն: Պատկերաւոր լեզուով արտայայտուելու համար կարելի է անվարան ըսել, որ եթէ Սփիւռքահայ մանկապատանեկան երգչախումբերը տարագիր հայորդիներու համար եղած է հայապահպան ուժեղագոյն զենքերէն մէկը, սփիւռքի մէջ ծնած ու ծաղկած խմբերգերը եղած են անոնց զինամթերքը, որոնցմով ապրել եւ ներշնչուել են իրարայաջօրդ տարբեր սերունդներ: Այլ խօսքով, իրենց ստեղծման պահով, նպատակով ու կացութեամբ, զիրենք ծնող տարագիր երաժշտահաններուն պէս, իրենք եւս տարագիր երգեր են ըստ էութեան, որոնք ստեղծագործուած ու մանկապատանեկան երգչախմբային կեանք մտնելով տարածուած են սփիւռքեան պայմաններու մէջ, նոյն պայմաններուն մէջ աննկարագրելիօրէն կարելոր առաքելութեան մը լծուած ըլլալով միաժամանակ: Հետեւաբար, սփիւռքահայ մանկապատանեկան շուրջ հարիւր խմբերգերը, իրենց պատմական նշանակութեամբ ու գեղարուեստական ինքնութեամբ կարելոր ու անբաժանելի մէկ մասն են համընդհանուր հայ մանկապատանեկան խմբերգային երաժշտութեան:

ՄԱՆՈՒԹԱԳՐՈՒԹԻՒՆ

1. Բարսէղ Կանաչեան, 19 փոքր երգեր, 1947, Պէյրութ, Լիբանան: *Barsegh Kanachean*, 19 poqr erger, 1947, Pejyruuth, Libanan.
2. Եղուարդ Յակոբեան, Մանկապատանեկան երգափունջ, Գահիրէ, Եգիպտոս: *Barsegh Kanachean*, 19 poqr yeger, 1947, Pejyruuth, Libanan.
3. Աւետիս Նաճարեան, 20 մանկական երգեր, Վենետիկ, Ս. Ղազար: *Avetis Nadcharean*, 20 mankakan yeger, Venetik, S. Ghazar.
4. Ալեքսան Մնակեան՝ Արտուտիկ, Պէյրութ, Լիբանան: *Alexsan Mnakean*, Artutik, Pejyruuth-Libanan.
5. Ալեքսան Մնակեանի ռազմախայրենասիրական երգերու մշակումներու ընտրանի, /«Շիրակ» ձայնագրեալ երգարան, Պէյրութ, Լիբանան: *Alexsan Mnakeani* razmahayrenasirakan ergeru mshakummeru 'ntrani, "Shirak" dzhaynagreall yergaran, Pejyruuth-Libanan.
6. Անդրանիկ Տագչեան, Բարսէղ Կանաչեան. Կեանքի մը երաժշտականացումը, 2017, Պէյրութ, Լիբանան: *Andranik Tagesean*, Barsegh Kanachean. Keanqi m' yerazhshtakanatum', 2017, Pejyruuth, Libanan.
7. Զարեհ Արք. Ազնաւորեան, Երգեցէ՛ք միշտ մանուկներ: Zareh Arq. Aznaurean, Yergetzejq misht manukner.
8. Արմէն Իւրնէշլեան, Համբարձում Պէրպէրեան՝ 100-ամեակ, 2005, Պէյրութ: Armen Iwrnejshlean, Hambardzum Pejreprejan' 100-fmeak, 2005, Pejyruuth.

9. Միրվարդ Գարամանուկ: *Sirvard Garamanuk*.
10. Զարար Քելշիշեան, Զարեհ Արք. Ազնաուրեանի յիշատակի հիմրգեի պրակ, 2005, Պէրոյթ: *Zaqar Qeshishean, Zareh Arq.*

- Aznaureani yishataki hemrgei prak, 2005, Pejyruth.
11. Գանձարան հայկական երգերու, Գահիրէ, Ոսկէ դար Տպարան: *Gandzharan haykakan yergeru, Gahire, Voske dar Tparan.*

Բանալի-բառեր. Կոմիտաս, Բարսեղ Կանաչեան, մանկական խմբերգեր, երգչախումբ, խմբավար, Ալէքսան Մնակեան, Աւետիս Նազարեան, Էդուարդ Հակոբեան, Զարեհ Արք. Ազնաուրեան:

Ключевые слова: Комитас, Барсег Каначян, детские хоры, хор, хормейстер, Алексан Мнакян, Аветис Назарян, Эдуард Акопян, Заре архиепископ Азнаурян.

Keywords: Barsegh Kanachean, children's choral music, choir, choirmaster, A/eksan Mnakyan, Avetis Nazaryan, Eduard Hakobyan, Zareh Archbishop Aznavourian.

Տեղեկություններ հեղինակի մասին. ՔԵՇԻՇԻԱՆ ԶԱԲԱՐ ՀԱՎՈՐԻ (ծ. 15.2.1968 թ., Այնճար, Լիբանան): Շվիահար, երգչախումբի հիմնադիր ու գեղարուեստական ղեկավար, խմբավար, Դասախօս: Երաժշտական բարձրագույն ուսումն ստացած է Երեւանի Կոմիտասի անուն պետական երաժշտանոցէն, որ աւարտած է պատույ յիշատակութեամբ իբրեւ շվիահար 1993-ին Ի. Մինասյանի դասարան եւ խմբավար՝ 1996-ին Ի. Վարդանեանի դասարան: 1999-ին, նոյնպէս պատույ յիշատակութեամբ աւարտած է կատարողական արուեստի բարձրագույն ընթացքը՝ յետ-ընթացաւարտ (post - graduate) Դասախօս է Լիբանանի պետական բարձրագույն երաժշտանոցի, Համազգային Բարսեղ Կանաչեան երաժշտական քոլէճի, ինչպէս նաեւ Լիբանանի Հայկազեան համալսարանի:

Сведения об авторе: КЕШИШЯН ЗАКАР АКОПОВИЧ (15 февраля 1968, Анджар, Ливан). Окончил: отделение “Народных инструментов” ЕГК им. Комитаса (шви, рук. И. Минасян, 1993); отделение Хордирижирования (класс И.Варданяна, 1996); аспирантуру ЕГК (1999). Является основателем следующих коллективов: детско-юношеский хор “Кававик” (1988); хор и оркестр “Циацин” (1992, Ливан); детский, юношеский и молодежный государственный хор “Варанда: (1992, Шуши, Нагорный Карабах (Арцах); детский и юношеский хор “Каркач” (1997, Ливан); армянский молодежный хор и оркестр “Айг” (2008); хор “Шнорали” при Католи- косате Киликии (Антилиас, Ливан) (2005-2009). Кешисян соруководитель музыкального колледжа им. Барсега Каначяна (1998-2000). В 2012 участвовал в международном фестивале “Эстергази” с исполнением “Истории Ануш” Георга Пелециса (Рига) совместно с известным оркестром “Kremergata Baltica” (Кремерата Балтика). Кешисян преподает в Национальной Высшей музыкальной консерватории Ливана, профессор, член Попечительского совета музыкального колледжа им. Барсега Каначяна, лектор Университета Айказян (Бейрут, Ливан).

Information about the author: KESH/SH/AN ZAKAR HAKOB (Born in 1968, in Anjar, Lebanon). In 1993, he graduated from Department of Traditional Instruments (Shvi, / Minasyan's class), and in 1996 from the Department of Choral Conducting (/ Vardanyan's class) at Yerevan State Komitas Conservatory. /n 1999, he completed postgraduate studies at YSC. He is the founder of the following music ensembles - Kaqavik Junior Choir (1988); Tsiatsan Choir and Orchestra (Lebanon, 1992); Varanda State Junior Choir (Shushi, Artsakh, 1992); Karkach Youth Choir (Lebanon, 1997); AYG Armenian Youth Choir and Orchestra (2008); Shnorhaly Choir under the Holy See of Cilicia (2005-2009). Keshishian has been the co-director of Barsegh Kanachyan Music College (1998-2000). /n 2012, together with Kremerata Baltica he participated in Esterhazy International Festival performing Ashugh's Story by Georg Pelecis. Keshishian is teaching at Lebanese National Higher Conservatory of Music. He is a professor, member of the Board of Trustees of Barsegh Kanachyan Music College, and a lecturer at Haigazian University in Beirut, Lebanon.

Резюме

Хормейстер, соискатель ИИ НАН РА *Закар Акопович Кешисян*. - “Наследие армянской диаспоры в армянской хоровой музыке для детей и юношества”.

Статья посвящена многолетнему и плодотворному творчеству композиторов армянской Диаспоры, проживающих и работающих в Бейруте (Ливан). Представлен обзор их деятельности в области создания хоровой музыки для детей и юношества. Автор, в частности, обращается к произведениям Барсега Каначяна (ученик Комитаса), Алексана Мнакяна, Эдуарда Акопяна, Аветиса Назаряна. Также следует признать заслуги архиепископа Заре Азнауряна, который уделял огромное внимание профессиональному воспитанию подрастающего поколения. Материал изложен в информационно-описательном стиле.

Summary

Choirmaster, postgraduate student at the Yerevan Komitas State Conservatory (Lebanon) *Zakar Hakob Keshishian* “Armenian Diaspora Heritage of Armenian Children's and Youth Choral Music”.

The article presents the long-term and fruitful creative work of Armenian composers of the Diaspora living and working in Beirut, Lebanon. The author reviews their work regarding choral music for children and youth, referring particularly to the works of Komitas' pupil Barsegh Kanachian, Alexan Mnakian, Eduard Hakobian, and Avetis Nazarian. We should also give credit to Zareh Archbishop Aznauryan, who paid great attention to the professional education of the younger generation. The material is presented in an informative and descriptive style.